



# Վայոց Ձորի մարզի Գնդեվազ համայնքի ջրամատակարարման վերականգնում

**Երկիր** Հայաստանի Հանրապետություն  
**Պատվիրատու** Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԿՎԳ  
**Ժամկետները** Մայիս – Օգոստոս, 2006թ.

## Ծառայության մոտավոր գինը

14 000 ԱՄՆ դոլար

## Տեխնիկական առաջադրանք

1. Ջրամատակարարման համակարգի, գոյություն ունեցող կառուցվածքների տեխնիկական վիճակի ուսումնասիրություններ,
2. Աշխատանքային նախագծերի մշակումներ,
3. Մրցույթային փաստաթղթերի կազմում



## **Ծրագրի և կատարված ծառայության համառոտ նկարագիրը**

Ուսումնասիրվել է Գնդեվազ համայնքի գոյություն ունեցող ջրամատակարարման համակարգի տեխնիկական վիճակը, կատարվել են կապտաժային կառուցվածքների, ջրատարի և ՕԿՁ-ների մանրամասն ուսումնասիրություններ:

Իրականացվել են 3 աղբյուրների հիդրոտեկնիկական ուսումնասիրություններ, կապտաժային կառուցվածքների ու ջրատարի տարածքների ինժեներատեխնիկական հետազոտություններ:

Աշխատանքային նախագծով նախատեսված է.

- 3 կապտաժային կառուցվածքների վերանորոգում,
- 200մ տրամագծի, 17կմ երկարության ինքնահոս ջրատարի կառուցում,
- ոռոգման նպատակով ջրառի համար ջրատարի վրա բաշխիչ հանգույցի նախագծում (մինչև քլորակայան),
- ջրատարի վրա մարիչ, օդահան և օդաթող հորերի կառուցում,
- 150մ<sup>3</sup> ծավալի 2 ՕԿՁ-ների վերանորոգում,
- ՕԿՁ-ների տարածքում քլորակայանի կառուցում՝ չոր դոզավորման վակուում քլորատորների կիրառմամբ:

Կատարված աշխատանքների հիման վրա մշակվել են նախագծանախահաշվային փաստաթղթեր, կազմվել են աշխատանքային գծագրեր, տեխնիկական մասնագրեր, ծավալների ամփոփագրեր, նախահաշիվներ: Նախագծի մշակման ժամանակ հաշվի են առնվել խմելու-կենցաղային և տնամերձերի ոռոգման ջրապահանջները, շրջակա միջավայրի պահպանման հարցերը:



## Աշխատանքի նպատակն է

Վայոց Ձորի մարզի Գնդեվազ համայնքի ջրամատակարարման ինքնահոս համակարգի վերականգնում, բնակչությանը հուսալի և անխափան խմելու և ոռոգման ջրով ապահովում:

